ՌԻԿԱՐԴՈՅԻ «ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ» ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԷՎՈԼՅՈՒՅԻՈՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՄԲ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Ա. Ռ.

Դասական քաղաքատնտեսական մոդելներում (որոնցում առաջնային նշանակություն ուներ առևտրական հարաբերությունների ազատականացման գաղափարը) ընդհանուր առմամբ ներկայացված տրամաբանությամբ, ըստ «*Laissez-faire*-ի» հիմնարար սկզբունքի, ապրանքները կարտադրվեն այն երկրներում, որտեղ դրանք համեմատաբար էժան են ստացվում (դիցուք, ըստ աշխատուժի մասնագիտացման տարածաշրջանային տարանջատման սկզբունքի): 1701 թ. սկսած՝ միջազգային առևտուրը դիտարկվում էր որպես ապրանքների առավել էժան ու քիչ աշխատուժի ծախսումով ձեռքբերման հնարավորություն[1]: Այսօրինակ մոտեցումները, որոնք զարգացվեցին և առավել համակարգված շարադրվեցին Ա. Սմիթի աշխատություններում[2], հայտնի են *բացարձակ առավելությունների* տեսություն անվամբ: Տեսության հետագա զարգացումը եղավ Պ. Ռիկարդոյի ներկայացրած համեմատական առավելությունների վերաբերյալ մտքերի շարադրանքը: Հետաքրքրքրական է, որ անգլիացի մասնագետներն էին շահագրգռված միջազգային առևտրատնտեսական կապերի հաստատման վերաբերյալ տեսությունների մշակմամբ: Հիշենք մերկանտիլիստների քաղաքատնտեսական համակարգի առանցքը կազմող՝ արտաքին առևտրի վերաբերյալ դրույթները, որոնցից ածանցվում էին երկրի հարստացման ու հզորացման՝ ոսկու և արծաթի կուտակման գաղափարները[3]:

Մնացյալ Եվրոպայում տեսությունը չարժանացավ այդօրինակ ընդունելության: Մասնագետներն այդչափ շահագրգռված չէին այս ուղղության հայացքների ներկայացմամբ: Մինչդեռ Եվրոպայից «կղզիացած» Անգլիային առավելապես պետք էր, տնտեսական զարգացման նկատառումներից ելնելով, միջազգային տնտեսական գործուն կապերի հաստատում: Այսինքն՝ Անգլիայի աշխարհագրական դիրքը ուղղորդող էր (տընտեսագիտական մտքի հետագա ընթացքը շարադրելու պարագայում) առաջնահերթությունների կանխորոշման հիմնահարցում: Այստեղ կարեվոր էր նաև այն գիտակցումը, որ Անգլիան գաղութատեր, հզոր երկիր էր, որը

---

[1] Այդօրինակ սկզբունքի նկարագրությամբ բազում աշխատություններ կան, որոնք հրատարակվել են նույնիսկ մինչ Ա. Սմիթը (այս մասին մանրամասն տե՛ս **Шумпетер Й. А.,** *История экономического анализа, т. 1, М., 2004 с. 490 – 493):*

[2] **Смит А.,** *Исследование о природе и причинах богатства народов (Антология экономической классики, т. 2, М., 1991).*

[3] **Мен Т.,** *Рассуждение о торговле Англии с Ост-Индией (Меркантилизм, Л., 1935);* **Петти У.,** *Экономические и статистические работы, М., 1940;* **Серра А.**, *Краткий трактат о средствах снабдить в изобилии золотом и серебром королевства, лишенные рудников драгоценных металов (Меркантилизм, Л., 1935).*

ստանձնել էր առաջատար դեր ողջ աշխարհում, և իր նավերի շուրջերկրյա անխոչ-ընդոտ ճանապարհորդությունն էր ապահովված: Ահա այդ պայմաններում ազատական տնտեսական քաղաքականության համընդհանուր, բոլոր երկրների կողմից ընդունելի կիրառությունը զարգացող Անգլիայի համար կապահովեր արտադրության ու իրացման անծայրածիր հնարավորություններ: Ի մասնավորի, դա ևս պատճառ էր, որ մերկանտիլիստական դրույթների քննադատ Ա. Սմիթը նույնպես անդրադառնում էր, իհարկե, այլ տեսանկյունից, մերկանտիլիզմի առանցքը կազմող միջազգային առևտրատնտեսական հարաբերություններին: Ակնհայտ է, որ մերկանտիլիստական «քաղաքատնտեսական» համակարգը կատարել էր իր առաքելությունը: Ապահովել էր արտադրության կազմակերպման, նաև ամբողջ տնտեսության զարգացման անհրաժեշտ ռեսուրսներ: Երկրի ներսում սեփական արտադրանքի նախընտրելի իրացման համար ձևավորել էր անհրաժեշտ ինստիտուցիոնալ մթնոլորտ, իսկ գիտական մտքի հետագա զարգացման ընթացքը, համաշխարհային պահանջարկի մեծության փոփոխելի կառուցվածքով հանդերձ, տնտեսագիտական միտքն արտադրության ոլորտում կենտրոնացնելու հենք էր ձևավորում: Այս համատեքստի ուսումնասիրություններում այնուհետև առաջնայնություն էր ստանում համաշխարհային մասշտաբով իրացում կազմակերպելու հիմնախնդիրը: Այսպիսով, Ա. Սմիթը ձևավորված նոր իրողությունների պայմաններում, ելնելով մարդու էության հելվեցիուսյան ընկալման տրամաբանությունից[4], գիտականորեն հիմնավորեց միջազգային առևտրի վերաբերյալ մերկանտիլիստների հայտնի «0 գումարով խաղ» գաղափարի գործնական անկատարությունը: Դ. Ռիկարդոն, հիմք ընդունելով Ա. Սմիթի՝ «բացարձակ առավելության» տեսությունը, առավել հետեվողական գտնվեց և ներկայացրեց «համեմատական առավելությունների» տեսության կենսունակության գաղափարը՝ երկու երկրների միջև միջազգային առևտրի կազմակերպման պայմաններում[5]: Այստեղից էլ հետագայում կյանքի կոչվեց միևնույն գաղափարի արդարացի կիրառությունը N երկրների և N ապրանքների համախմբության համար[6]: Այս տեսությունը զարգացում և միջազգային ճանաչում ձեռք բերեց հենց Դ. Ռիկարդոյի ակտիվ ջանքերի շնորհիվ: Նա դիտարկել էր 2 երկիր՝ Անգլիա և Պորտուգալիա, ու 2 ապրանք՝ գինի և մահուդ: Որպես հիմք ընդունելով, որ Պորտուգալիայում երկու ապրանքների արտադրությունն էլ առավել արդյունավետ էր, քան Անգլիայում

---

[4] **Гельвеций К.,** *О человеке, его умственных способностях и его воспитании, М., 1938.*

[5] **Рикардо Д.,** *Начала политической экономии и податного обложения, перевод с английского под редакцией Н. Рязанова, М., 1910, с. 77-93.* Դ. Ռիկարդոն, սակայն, բանավիճում էր դասական քաղաքատնտեսության նախահայր Սմիթի հետ՝ չհամաձայնվելով այն մտքին, որ միջազգային առևտրի դեպքում երկրի շահը, ի վերջո, մնացյալ ճյուղերում բերելու է շահութաբերության ավելացմամբ «հավասարեցման»: Ռիկարդոյի խորին համոզմամբ, վերոգրյալ երևույթը հանգեցնելու էր կապիտալի ներհոսքի, այնուհետև՝ շահույթի անկմամբ, «հավասարեցման» մնացյալ ճյուղերում (**Рикардо Д.,** նշվ. աշխ., էջ 77–93): Ռիկարդոյի հոռետեսական հայացքներն այս օրենքի գործողության մեխանիզմի կենսունակության վերաբերյալ ցույց էին տալիս կապիտալիզմի անկման հնարավորությունները:

[6] Տե՛ս **Киреев А.,** *Международная экономика,часть первая, Международная микроэкономика: движение товаров и факторов производства, М., 1999, с. 84-94.*

(միևնույն քանակությամբ գինի և մահուդ արտադրելու համար Պորտուգալիան ծախսում էր համապատասխանաբար 80 և 90 միավոր աշխատուժ), նա եզրակացնում էր, որ Անգլիայում այդ նույն քանակությամբ նույն ապրանքներն արտադրելու համար պետք կգար, օրինակ, համապատասխանաբար 120 և 100 միավոր աշխատուժ[7]: Ահա այս պայմաններում Պորտուգալիան կմասնագիտանար գինու արտադրության ոլորտում և կներմուծեր մահուդ, իսկ Անգլիան կմասնագիտանար մահուդի արտադրության ոլորտում ու կներմուծեր գինի: Այս պարագայում նա կատարում է մի կարևոր եզրակացություն. մեկ միավոր անգլիական մահուդի դիմաց կտրամադրվի 9/8 միավորից մինչ 5/6 միավոր պորտուգալական գինի: Առաջին փոխանակային (սահմանային) հարաբերության հաստատման դեպքում առավելությունից ամբողջովին կօգտվի Անգլիան, իսկ Պորտուգալիան կհայտնվի ո՛չ շահողի, ո՛չ կորցնողի դերում: Երկրորդում Անգլիայի ու Պորտուգալիայի դիրքերը փոխվում են: Այդ երկու սահմանային իրավիճակների միջանկյալ բոլոր իրավիճակներում անվերապահորեն կշահեն երկու երկրները միաժամանակ[8]:

Համեմատական առավելությունների տեսությունը, հետադարձ վերծանությամբ, ժամանակակից դասագրքերում թերևս ներկայացվում է հետևյալ ընդգրկմամբ: Եթե մի երկիր մեկ այլ երկրի համեմատ անարդյունավետ է, դիցուք՝ երկու ապրանքների արտադրության բնագավառում, այսինքն՝ տվյալ պարագայում բացարձակորեն ոչ մի առավելությամբ օժտված չէ, այնուամենայնիվ, այդ երկրների միջև այդ երկու ապրանքների գծով առկա են առևտրատնտեսական հարաբերությունների հաստատման փոխշահավետ պայմաններ: Այդ երկրներից մեկը, դիցուք՝ Պորտուգալիան, կմասնագիտանա այն ապրանքի արտադրության և արտահանման գործում, որի՝ բացարձակ առումով անարդյունավետությունն ավելի փոքր է[9], այսինքն՝ երբ առկա է համեմատական առավելություն, այն է՝ գինու արտադրություն ու արտահանում: Այն կներկրի այնպիսի ապրանք, որի բացարձակ անարդյունավետությունը առաջին ապրանքի համեմատությամբ մեծ է, այսինքն՝ առավելությունից համեմատաբար զերծ ապրանք, այն է՝ մահուդ:

Գինու արտադրության դեպքում Պորտուգալիան կխնայի 1/9 չափով աշխատուժ՝ համեմատած երկրի ներսում մահուդ արտադրելու հետ, և այնտեղ գինու արտադրությունը 50%-ով ավելի շատ արդյունավետ է, քան Անգլիայում: Ահա այս տրամաբանությամբ Անգլիան կմասնագիտանա մահուդի արտադրության ոլորտում, քանի որ այս դեպքում նկատելի է միավորի 1/5-մասով աշխատուժի խնայողություն՝ երկրի ներսում գինու արտադրության կազմակերպման համեմատ: Մահուդի արտադրության դեպքում Անգլիան համեմատական առումով շահում է 20%-ով, իսկ Պորտուգալիայի կորուստը կազմում է 11.11%: Հետևաբար, միարժեքորեն բրխում է, որ Անգլիան կմասնագիտանա մահուդի արտադրության

---

[7] **Рикардо Д.,** նշվ. աշխ., էջ 82:

[8] Մասնագետները, որպես վերլուծական թերություն, առանձնացնում են Դ. Ռիկարդոյի և իր ժամանակակից հետևորդների կողմից երկրի՝ մենաշնորհային արտադրող հանդիսանալու դեպքում փոխանակային հարաբերակցությունները անտեսելը, որ, անշուշտ, նրանք կարող էին անել:

[9] **Киреев А.,** նշվ. աշխ., էջ 84-94: **Сальваторе Д.,** *Международная экономика, М., 1998, с. 25-38.*

կազմակերպմամբ ու այն կարտահանի Պորտուգալիա և գինի կներկրի Պորտուգալիայից[10]:

Դասական քաղաքատնտեսության մասնագետները տնտեսությունում իրական և դրամական հատվածների գործարկման սկզբունքային տարանջատում չէին կատարում[11]: Ասվածի լավագույն ապացույցն է քննվող ժամանակաշրջանում Ժ. Սեյի՝ շուկաների օրենքի, ինչպես նաև նույնության ու հավասարության ներկայացումը: Թեև հետագայում Ա. Մարշալը ներմուծում է այնպիսի բանաձևում, ըստ որի, մարդիկ, հնարավոր է, որ տիրապետեն ֆինանսական առումով գնողունակ միջոցների, սակայն ժամանակի որոշակի հատվածում չօգտվեն իրենց ընձեռված այդ հնարավորությունից: Սակայն սա ամենևին չէր աղճատում դասական սկզբունքների գործարկումը, այլ միայն հաստատում էր խնայողությունների (S)՝ ներդրումների (I) տեսքով օգտագործումը (S=I՝ պայմանավորված փողի իրական, բանկային տոկոսադրույքի ճկունությամբ): Ուստի և տվյալ մոդելում հաշվի առնելով վերոգրյալ երկճյուղման բացասման ներգործությունը՝ Դ. Ռիկարդոն և իր ժամանակակիցները լիարժեքորեն չէին քննարկում համեմատական առավելությունների սկզբունքը «փողային» տնտեսության պայմաններում: Վերլուծական առումով, բնականաբար, հարց էր ծագում, թե ինչպես Անգլիան կարող էր տվյալ դեպքում ապրանք արտահանել Պորտուգալիա, եթե այն առավելապես անշահավետ պայմաններում էր արտադրվում ամբողջ Անգլիայի տարածքում: Սակայն այս պարագայում քննարկվում է մի տարբերակ, որ Անգլիայում աշխատավարձի մեծությունը կլինի ավելի փոքր, ինչը գումարային առումով (կամ արտադրյալի տեսքով) 1 միավոր մահուդի և/կամ գինու արտադրությունում կստեղծի իրական հնարավորություններ՝ արտահանման կազմակերպման համար (հիշենք, որ դեռևս Ա. Սմիթի կողմից եզրահանգվում էր աշխատավարձի տարբերությունների թույլատրելիություն տարբեր երկրներում): Այդ դեպքում, ըստ մոդելային հարթությունում ներկայացված տրամաբանության, ենթադրելի է, որ Անգլիայում աշխատուժն առավել անարտադրողական է, քան Պորտուգալիայում, ուստի և ներմուծված գործոնների ազդեցությունը ևս հաշվի առնելով՝ համեմատական առումով կրկին արդյունավետ կլինի Անգլիայի մասնագիտացումը՝ գինու և Պորտուգալիայինը՝ մահուդի արտադրության բնագավառում: Թեև կարճաժամկետ հատվածում, կապիտալի կուտակման տեմպերով պայմանավորված, հնարավոր էր ենթադրել առավել անարդյունավետ համարվող Անգլիայի աշխատուժի հանդեպ ներքին պահանջարկի ավելացմամբ աշխատավարձի բարձրացում, սակայն հեռագնա առումով կգործեր

---

[10] Վերլուծական այս հարթույթում կատարված է այնօրինակ վերացարկում, թե աշխարհը բաղկացած է երկու երկրներից, որոնք արտադրում են երկու ապրանք (այսպիսի վերացարկումը միանշանակորեն բնորոշ է դասական քաղաքատնտեսության մասնագետներին): Ինչպես նաև ընդունվում է, որ եթե մի երկիրը մյուսի նկատմամբ օժտված է մի ապրանքի արտադրության բնագավառում համեմատական առավելությամբ, ապա մյուսը համադրելիորեն կունենա առավելություն մյուս ապրանքի արտադրության ոլորտում:

[11] Թեև Դ. Ռիկարդոն տվյալ տեսության շրջանակում անդրադառնում է մոնետար գործոնի դերին, սակայն նրա կողմնորոշումները արտաքին առևտրի վերաբերյալ, ըստ էության, չեն փոփոխվում (տե՛ս **Рикардо Д.**, նշվ. աշխ., էջ 88-92):

վերոգրյալ տրամաբանությունը, իսկ արժույթների փոխարժեքային հարաբերակցության գործոնային ազդեցության դիտարկմամբ՝ նաև տեղի կունենար անգլիական ֆունտ ստեռլինգի արժեզրկում՝ պորտուգալական էսկուդոյի համեմատ: Փոխարժեքային նոր հարաբերակցությունը կհաստատվեր այնպիսի միջակայքում, որը կզուգակցվեր Դ. Ռիկարդոյի վերծանած՝ մեկ միավոր հաշվարկով սահմանային տիրույթին (այն կհամապատասխանի 9/8 միավորից մինչ 5/6 միավոր փոխանակային մակարդակին): Այս ընթացքում նա ապացուցում էր ազատական տնտեսական քաղաքականության արդյունավետությունը և, բնականաբար, հերքում այնօրինակ պահանջի արդարացիությունը, թե արդյունավետ կլինի Անգլիայի կողմից այնպիսի քաղաքականության իրագործումը, որն անգլիացի աշխատավորներին կապահովի պորտուգալական առավել արտադրողական աշխատուժի նկըրտումներից, և հակառակը՝ Պորտուգալիան կտուժի իր աշխատուժի նկատմամբ սահմանված առավել բարձր աշխատավարձի մակարդակից: Այս ամենի մասին ի վերջո հոգ է տանում շուկայական «կատարյալ» մեխանիզմը:

Մասնագիտական գրականության մեջ դրսևորվում է Դ. Ռիկարդոյի վերլուծական ապարատում համեմատական առավելությունների սկզբունքի և արժեքի աշխատանքային տեսության միջև եղած անհամատեղելիություն: Այսպես, որպեսզի համեմատական առավելությունների տեսությունը փոխառնչվի Ա. Սմիթի և Դ. Ռիկարդոյի կողմից առավել հետեվողականորեն ներկայացված արժեքի աշխատանքային տեսությանը, վերացարկելիորեն պետք է ընդունել, որ աշխատանքն է արտադրության միակ գործոնը, և աշխատանքը միատարր է: Թերևս տնտեսագիտական մտքի հետագա զարգացման ընթացքի ուսումնասիրմամբ կարելի է արձանագրել, որ արժեքի աշխատանքային տեսության քննարկումները բխեցված էին առևտրի բնագավառից արտադրություն անցումից, իսկ այդ տեսությունն այլ հիմնահարցերի հետազոտության համար հնարավորություն էր ստեղծում փոխառնչելի համատեքստում հանգել սահմանային դեպքերում օգտակարության քննարկման գաղափարին[12]:

1930-ական թվականներին հիմնախնդիրը վերլուծվեց ծախսերի փոխարինման շրջանակում: Ծախսերի փոխարինումը մի ապրանքի (լրացուցիչ) միավորի արտադ-

---

[12] *Սակայն տնտեսագիտական մտքի զարգացման տվյալ շրջանում արժեքի աշխատանքային տեսությունը, իսկապես, քննարկելի համատեքստում ճշգրտման կարիք ուներ նաև այն պատճառով, որ առավելապես առնչվում էր համեմատական առավելությունների տեսությանը: Չնայած այս մոտեցումների փոխշփմանը և այն հանգամանքին, որ Դ. Ռիկարդոն արժեքի աշխատանքային տեսության շարադրման գործում առավել հետևողական գտնվեց, քան Ա. Սմիթը, սակայն լավագույնս չկարողացավ այն հիմնավորել: Դ. Ռիկարդոյի ուսմունքից, մասնավորապես նրանում ամփոփված արժեքի աշխատանքային տեսության և համեմատական առավելությունների սկզբունքի նկարագրությունից ակնհայտ էր դառնում տնտեսագիտական մտքի հետագա զարգացումների ընթացքում գերակայությունների որոշման հիմնահարցը: Կ. Մարքսն էլ ավարտին կհասցներ արժեքի աշխատանքային տեսությունը՝ այդպիսով անուղղակիորեն հաղթահարելով Դ. Ռիկարդոյի տեսությունում առկա որոշակի վերլուծական «աղճատումը» (քանզի արժեքի աշխատանքային ավարտուն տեսությունն առնչելի էր դառնում երկու երկրների միջև համեմատական առավելությունների դեպքում իրականացվող միջազգային առևտրի պայմաններում ապրանքների փոխանակային հարաբերակցության որոշմանը):*

ության համար մյուս ապրանքի միավորների քանակից հրաժարման չափն էր: Այս պարագայում ներմուծվում էր, ինչպես «բնօրինակում», այլընտրանքային ծախսերի գաղափարը: Ավելին՝ աշխատանքն այլևս չէր դիտարկվում միատարր տեսքով: Այս ամենի շնորհիվ կազատվեին ռեսուրսներ, որոնք կներդրվեին մյուս ապրանքի արտադրության բնագավառում: Այս ենթատեքստով հանդերձ՝ տեսությունը հաճախ շրջանառվում է «Համեմատական ծախսերի օրենք» անվամբ: Դ. Ռիկարդոյի քննարկած օրինակում ծախսերի փոխարինման չափը կտատանվի մեկ միավոր անգլիական մահուդի դիմաց 9/8 միավորից մինչ 5/6 միավոր պորտուգալական գինու տրամադրելիք տիրույթում: Ահա այս տրամաբանությամբ[13] ներկայացնենք Անգլիայի և Պորտուգալիայի համար արտադրական հնարավորությունների սահման (ԱՀՍ) փոխակերպման կորագիծը:

Պորտուգալիայի ԱՀՍ – ի փոխակերպման կորագիծը



Անգլիայի ԱՀՍ – ի փոխակերպման կորագիծը



[13] Իհարկե, ԱՀՍ–ի կորը ռեսուրսների փոխադարձ փոխարինելիության պայմաններում կանխավ ուռուցիկ է՝ սկզբնակետի նկատմամբ այլընտրանքային ծախսերի աճով պայմանավորված: ԱՀՍ–ի կորագիծն ուղիղ գծի տեսք կընդունի ռեսուրսների փոխլրացման սկզբունքի տեսական կենսունակության պարագայում: Սակայն տվյալ դեպքում ԱՀՍ–ի գրաֆիկական վերոգրյալ տեսքը դասական քաղաքատնտեսության մասնագետներին բնորոշ՝ միկրոմակարդակում օրինաչափությունների՝ մակրոառնչությունում արտածման հետևանք է:

Նախապես ընդունենք Դ. Ռիկարդոյի սահմանած 9/8 միավորից մինչև 5/6 միավորի միջակայքում պայմանական փոխանակային հարաբերակցությունը: Դիցուք՝ այն հավասար է մեկի (*և կատարենք մարքսյան վերլուծական հնար՝ ցույց տալով, թե տվյալ պարագայում ինչպես կշարադրվի Դ. Ռիկարդոյի՝ համեմատական առավելությունների տեսությունը ավարտուն տեսքով*): Այսինքն՝ երկու երկրների միջև միջազգային առևտրի իրականացման պայմաններում կսահմանվի 1 պայմանական միավոր (պմ) մահուդի դիմաց 1 պմ գինու փոխանակային հարաբերակցություն: Պորտուգալիան մասնագիտանալու էր գինու արտադրության բնագավառում (դեռևս ճշգրտորեն հիմնավորել էր Դ. Ռիկարդոն) և կարտադրի, դիցուք՝ 3240 պմ գինի, Անգլիան՝ համապատասխանաբար 2880 պմ մահուդ: Ընդունենք, որ Անգլիան մինչ միջազգային առևտրական հարաբերությունների հաստատումը ուներ գինու 2000 պմ և մահուդի 500 պմ պահանջարկ, իսկ Պորտուգալիան՝ 2000 պմ մահուդի և 1000 պմ գինու պահանջարկ, որը երկու դեպքում էլ հնարավոր էր դառնում արտադրել և՛ Անգլիայի, և՛ Պորտուգալիայի միայն ու միայն ներքին ռեսուրսների ներգրավմամբ՝ առանց այդ երկու երկրների միջև միջազգային առևտրական հարաբերությունների հաստատման: Հաստատված միավոր փոխանակային հարաբերակցության ընթացքում տեղի է ունենում ԱՀՍ–ի կորի տեղաշարժ հոծ գծի տեսքով՝ տեղափոխված կետագծմամբ: Այսինքն՝ Պորտուգալիան պատրաստ կլինի տրամադրելու 2240 պմ գինի 2000 պմ մահուդի դիմաց: Այդօրինակ հարաբերակցությամբ երկրի ներսում փոխանակային հարաբերություններ կստեղծվեն մինչ միջազգային առևտրական հարաբերությունների հաստատումը, սակայն այժմ միավոր փոխանակային հարաբերակցության դեպքի դիտարկման միջոցով հնարավոր կլինի ստանալ ավելի քան 2000, այն է՝ 2240 պմ մահուդ: Անգլիայում 2000 պմ գինու դիմաց պատրաստ են տրամադրել 2380 պմ մահուդ: Սակայն միջազգային առևտրական հարաբերությունների հաստատմամբ, այդ նույն քանակությամբ մահուդի դիմաց հնարավորություն է ստեղծվում ձեռք բերել նույնքան, այն է՝ 2380 պմ գինի[14]:

Համաշխարհային տնտեսությունը, ըստ միջազգային առևտրական հարաբերությունների ազատականացման այս դեպքի, շահում է գինու և մահուդի լրացուցիչ միավորների արտադրության հնարավորություն: Այս պարագայում ռեսուրսների ծավալի ավելացում չի ենթադրվում: Գրաֆիկական պատկերագրմամբ ակնհայտ է ԱՀՍ–ի կորագծի՝ դեպի աջ տեղաշարժման հնարավորությունը՝ միայն ու միայն միջազգային առևտրական հարաբերությունների իրականացմամբ: Տեղին է հիշել դեռևս Ա. Սմիթի դիտարկած՝ մասնագիտացման շնորհիվ արտադրանքի թողարկման ծավալի մեծացման հնարավորությունները, ինչն էլ Ա. Սմիթի տեսությունում բացարձակ առավելությունների սկզբունքի քննարկման հետագա հենք է նախատեսում:

Հետադարձ վերծանությամբ գրաֆիկական պատկերագրմամբ՝ Ռիկարդոյի ներկայացրած մոդելի շրջանակում կարելի կլինի համաշխարհային շուկայում ստեղծել

[14] Թվական տվյալների ընտրության հարցում առաջնային ենք համարել այն սկզբունքը, որ գինու և մահուդի վերոգրյալ փոխանակային արժեքը պահպանվի:

մահուդի և գինու գնային ու քանակային փոխանակային հարաբերակցության հավասարակշռելի մակարդակ: Այսպես, Պորտուգալիայում գինու արտադրությունում մասնագիտանալու շնորհիվ ներքին պահանջարկը բավարարելուց հետո դեռևս կմնա 2240 լրացուցիչ պմ գինի: Մահուդի արտադրությունում մասնագիտացած ներքին պահանջարկը բավարարելուց հետո Անգլիան լրացուցիչ կտնօրինի 2380 լրացուցիչ պմ մահուդ:

Եթե Պորտուգալիայում 1 պմ գինու արտադրությունը 0.889 անգամ քիչ աշխատատար է, քան 1 պմ մահուդի արտադրությունը, ապա Անգլիայում 1 պմ գինու արտադրությունը 1.2 անգամ առավել աշխատատար է, քան 1 պմ մահուդինը: Համապատասխանաբար, համաշխարհային շուկայում Պորտուգալիայի՝ 2240 պմ գինու ավելցուկային արտադրությունը համադրելի է դառնում Անգլիայի՝ 2380 պմ մահուդի արտադրությանը: Թերևս հնարավոր կլինի հաստատելու (2240/2380=) 0.941 արժեքային պայմանական հարաբերակցություն: Համապատասխանաբար, Պորտուգալիայում 1 պմ մահուդի արտադրությունը 1.125 անգամ առավել աշխատատար է, քան 1 պմ գինու արտադրությունը, և Անգլիայում 1 պմ մահուդի արտադրությունը 0.833 անգամ քիչ աշխատատար է, քան 1 պմ գինու արտադրությունը: Համաշխարհային շուկայում թերևս հնարավոր կլինի հաստատելու (2380/2240=) 1.0625 արժեքային պայմանական հարաբերակցություն:



Այս պարագայում արծարծվում է այն գաղափարը, որ միևնույն 4 միավորը հնարավոր է դառնում արտադրելու 390 միավոր աշխատանքի փոխարեն՝ 360 միավոր աշխատանքի շնորհիվ, իսկ այդ դեպքում հետագայում տեղի կունենա

Էրաբեր 2-5

լրացուցիչ աշխատանքային միավորների ներդրում տնտեսությունում, և կբարձրանա արտադրանքի թողարկման ընդհանուր մակարդակը[15]:

Իհարկե, այս ամենն «ի չիք է դառնում» տնտեսագիտության բնագավառում նոբելյան մրցանակակիր Ջ. Նեշի՝ տնտեսական զարգացման նորովի պայմաններում տնտեսավարող սուբյեկտի ռացիոնալության ընկալման արդի ձևաչափում հավասարակշռություն հաստատելու վերաբերյալ ծավալած քննարկումներում[16]: Ըստ այս համատեքստի, ուսումնասիրության տնտեսավարող սուբյեկտին բնորոշ ռացիոնալությունը նախապայման է ընդունելու անորոշ և ռիսկային իրավիճակների հարափոփոխ ազդեցությունը: Ուստի և վերոգրյալ տեսությունում հավասարակշռության հաստատումը պետք է քննել շահավետության այլ դիրքերից: Ի մասնավորի, Անգլիայի և Պորտուգալիայի միջև 2 ապրանքների միջազգային ապրանքափոխանակությունը հավասարակշռվում է՝ գինու դեպքում՝ 100 միավոր, և մահուդի պարագայում՝ 95 միավոր աշխատուժի կիրառությամբ արտադրության կազմակերպման հնարավորությամբ: Այս միջինացված ցուցանիշները արտահայտում են երկու երկրներում շահույթի և վնասի համաչափ հավասարակշռման հավասարահեռ հնարավորությունը: Ելնելով տնտեսավարող սուբյեկտի ռացիոնալության կանխավարկածից՝ ակնհայտ է, որ երկու երկրներում էլ գիտակցում են, և հաշվարկված են հնարավոր կորստի ու շահութաբերության այլընտրանքային սահմանները: Համաշխարհային տնտեսության երկգործոն վերացարկված մոդելում համեմատական առավելությամբ օժտված երկրի կորստաբեր արտադրական հնարավորությունները (բացասական), իհարկե, ազդեցություն են թողնելու նաև համաշխարհային տնտեսության վրա՝ ինչպես այլ երկրներում պահանջմունքների բավարարման, այնպես էլ տվյալ երկիր ներկրվող ապրանքների սպառման առումներով: Միջինացված ցուցանիշներով «*տնտեսագիտորեն ռացիոնալ*» ընկալմամբ են շարադրվում արտադրական վերոգրյալ հնարավորություններն այդ երկու երկրներում:

Տվյալ տեսության շրջանակում, համապատասխանաբար, 100 և 95 միավոր ռեսուրսների կիրառմամբ արտադրության կազմակերպման դեպքը կդիտվի որպես հավասարակշռության հաստատման լավագույն, անխախտ հնարավորություն: Թեպետ հարկ է նկատել, որ «տնտեսագիտության էվոլյուցիան զերծ չէր սուբյեկտիվիզմից» և վերացարկված նախապայմանների փոփոխությունից, ինչպիսիք են երկրների չափերը և մասնագիտացման այլընտրանքային հնարավորությունները, մոնետար գործիքների ազդեցությունը, համաշխարհային տնտեսության գլոբալիզացիան և տնտեսական զարգացման ներուժը, փոխպահանջարկի (փոխառաջարկի) կորերի սահմանումը, կապիտալատար և աշխատատար ապրանքների արտա-

[15] Դ. Ռիկարդոյի վերլուծությունում առաջնային նշանակություն չէր ստանում տընտեսությունում հավասարակշռության դեպքի հաստատման հնարավորությունը, քանզի այն համարվում էր ինքնաշխատ կերպով հաստատվող երևույթ, որի հոգածությունը իր վրա է վերցնում շուկայական *«կատարյալ»* մեխանիզմը: Այսպիսով, վերլուծությունը կաղապարված էր հավասարակշռության հաստատման հնարավոր դեպքերի քննարկմամբ, որն էլ հետագայում «օրգանապես» կշարունակվեր այս ուղղվածությամբ մյուս մտածողների՝ Ջ. Ս. Միլի, Ա. Մարշալի աշխատություններում:

[16] http://nobelprize.org/economics/laureates/1994/nash-lecture.pdf.

հանման ու ներմուծման գործոնը և այլն. սրանք համալրում էին տնտեսագիտական ձեռքբերումների ընթացքը:

Ինչևիցե, Դ. Ռիկարդոյի տեսության շրջանակում տնտեսագիտական մտքի զարգացման առաջնահերթությունների որոշման հիմնահարցը տեսանելի է դառնում համաշխարհային շուկայում ձևավորված նորովի պայմաններում հաստատված ապրանքային քանակությունների փոխանակային հարաբերությունների յուրովի ընկալմամբ: Ժ. Մեյը և դասական դպրոցի մյուս հետևորդները երևույթը դիտարկում են առաջարկի ավելացման բնագավառում ազդանշանային շեշտադրությունների բնութագրությամբ, այստեղից բխող հայտնի՝ ապրանքները փոխանակվում են ապրանքներով բանաձևմամբ, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայում, որն էլ Ջ. Քեյնսի շարադրմամբ հայտնի է հետևյալ կերպ՝ առաջարկը կծնի պահանջարկ: Այս պարագայում ուրվագծվում է նաև մերկանտիլիստների հայտնի եզրահանգման՝ սկզբունքորեն վերլուծական նոր մակարդակում ներկայացված դրույթի փոխակերպված շարունակությունը, ըստ որի, միևնույն ապրանքը տարբեր երկրներում հնարավոր է ձեռք բերել տարբեր գներով: Կարծեք թե հերքվում է դեռևս անտիկ աշխարհից եկող՝ ապրանքափոխանակության հարցում գործող արժեքային հավասարության դրույթը, սակայն այս համատեքստում ի սկզբանե Ա. Սմիթի, այնուհետև Ջ. Միլի և վերջապես Ս. Մարշալի ընդհանրացրած «փոխադարձ պահանջարկի» մոդելային շարադրմամբ առաջ է քաշվում համաշխարհային շուկայում փոխանակվող ապրանքների արժեքային հավասարության դրույթը:

Այսպիսով, «համեմատական առավելությունների տեսությունը» ամփոփում էր տնտեսագիտական մտքի զարգացման հետագա ընթացքում դուրս բերվող առաջնահերթությունների յուրովի ցանկ:

“ТЕОРИЯ СРАВНИТЕЛЬНЫХ ПРЕИМУЩЕСТВ” РИКАРДО В ОПРЕДЕЛЕНИИ ЭВОЛЮЦИОННЫХ ПРИОРИТЕТОВ ЭКОНОМИЧЕСКОЙ МЫСЛИ

МАРТИРОСЯН А. Р.

Резюме

Еще в 1701 году неизвестный автор издал труд, озаглавленный “*Consideration on the East-India Trade*” (подробно работу см. в издании Дж. Р. Мак-Кулоха “*A Select Collection of Early English Tracts on Commerce”* 1856 г.), в котором международная торговля рассматривалась как возможность более дешевого приобретения товаров, с меньшими затратами рабочей силы. В работах подобного рода ключевое значение имело разъяснение

проблемы с точки зрения утверждения торгово-экономических отношений. В свете сказанного следует выделить труды Адама Смита, в которых рассматривается теория *абсолютных преимуществ, получившая с*вое дальнейшее развитие у Давида Рикардо. Примечательно, что в разработке теорий относительно утверждения международных торгово-экономических связей были заинтересованы именно английские экономисты – “меркантилисты”.

“Теория относительных преимуществ” Рикардо является своеобразным обобщением перечней приоритетов.

К данной проблеме в дальнейшем обращались также Ж. Б. Сей, Дж. С. Милл, А. Маршалл, В. Леонтьев и опосредованно – Дж. Неш.